

No	Դիմորդ Կազմակերպությունը	Ծրագրի անվանումը	Ծրագրի համառոտ նկարագիրը
1.	Երևանի Մ. Զերացու անվան պետական բժշկական համալսարան	Հիպոկրատի երդմանը հավատարիմ	<p><i>Կազմակերպությունը տարբեր բուժհաստատություններում կիրականացնի կոռուպցիոն ռիսկերի խոր ուսումնասիրություն և կմշակի դրանց կանխման հստակ մեխանիզմներ: Մասնավորապես, այն կիրականացնի մարքեթինգային հետազոտություն բժշկական ծառայությունների ծախսերի և իրական արժեքի շուրջ, կուսումնասիրի հիվանդներին բժշկական ծառայություններ տրամադրելու մեխանիզմները, կվերլուծի և կզնահատի բուժաշխատողների աշխատավարձերի հաշվարկման մեխանիզմները և կմշակի բժշկական ծառայությունների վճարների և աշխատավարձերի հաշվարկման նոր մեխանիզմներ:</i></p>
2.	«Աստղիկ» հաշմանդամ երեխաների ծնողների ասոցիացիա ՀԿ	Խնամակալություն	<p><i>ՀԿ-ն կաջակցի խնամակալության մարմիններում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը և Երևանի 12 համայնքներում կբարձրացնի իրազեկությունը խնամակալությանն առնչվող մարմինների մասին: Ծրագրի խնդիրներն են խնամակալության մասին ուղեցույցի, կայք-էջի և հաշմանդամ երեխաների ցուցակի պատրաստումը և ուղեցույցի հրապարակումը:</i></p>
3.	Երիտասարդ ընտանիքի աջակցության կենտրոն	Թափանցիկ համայնքային բյուջե	<p><i>Ծրագիրը նպատակ ունի ավելացնել բյուջեի եկամուտները Վայոց ձորի Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ, Մալիշկա համայնքներում՝ նվազեցնելով առկա</i></p>

			<i>կոռուպցիոն ռիսկերը:</i>
4.	«Բանաձև» ՍՊԸ	Հատուկ ռեպորտաժ	<i>Կազմակերպությունը կպատրաստի և կհեռարձակի 8 հեռուստահաղորդում՝ հիմնվելով կոռուպցիոն ռեպերի հետախուզական ժուռնալիստիկայի վրա:</i>
5.	Հասարակայնության հետ կապերի Հայկական Ասոցիացիա ՀԿ	Ազատվենք կոռուպցիայից	<i>ՀԿ-ն կբարձրացնի հասարակության, ՁԼՄ-ների և բիզնեսի ոլորտի իրազեկությունը քաղաքացիների իրավունքների պաշտպանության մասին՝ անցկացնելով քարոզարշավներ՝ ներկայացնելով դատարաններում և այլ հանրային մարմիններում քաղաքացիների իրավունքների պաշտպանության փորձի հաջողված պատմություններ:</i>
6.	Ապավեն համայնքներին բարեգործական ՀԿ	Նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը գյուղական համայնքներում	<i>ՀԿ-ն կաջակցի կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը պետական պատվերի շրջանակներում Տավուշի մարզի 20 համայնքների անվճար բուժօառայությունների ոլորտում՝ զարգացնելով և ներդնելով նոր մոտեցումներ, մոբիլիզացիայի, իրազեկության բարձրացման և ակտիվ մասնակցության միջոցով:</i>
7.	Սյունիքի երիտասարդ բժիշկներ ՀԿ	Հաշվետու բուժհաստատություն՝ առողջ համայնք	<i>ՀԿ-ն կբարձրացնի քաղաքային և գյուղական համայնքների բնակչության իրազեկության մակարդակը և կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականությունը առաջնային բուժօգնության ծառայությունների տրամադրման ոլորտում: Այն նաև նպատակ ունի բարձրացնել Սյունիքի առողջապահական ծառայություններ մատուցող հաստատությունների հաշվետվողունակությունը և թափանցիկությունը՝ առաջարկությունների փաթեթի մշակման և այն Առողջապահության նախարարությանը ներկայացման միջոցով:</i>

8.	Արմավիրի զարգացման կենտրոն	Օգտվենք մեր իրավունքներից	<i>ՉԿ-ն կիրականացնի հակակոռուպցիոն մասնակցային մոնիթորինգ Արմավիրի մարզի 4 ամբուլատոր-պոլիկլինիկաներում և կիրականացնի հանրային կրթություն և իրազեկության բարձրացում` կապված անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրման հետ:</i>
----	----------------------------	---------------------------	---